ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1

№ ԲՄԱՊՁԲ-20-7/1-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 10-ը հուլիսի 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և Ա/Ձ Արայիկ Աբրահամյանը, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 13.02.2020թ. կնքված № ԲՄԱՊՁԲ-20-7/1-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 2 302 860 (երկու միլիոն երեք հարյուր երկու հազար ութ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.2 կետին համապատասխան, 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ (Հավելված N 2):

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ք. Երևան, Բագրևանդի 5	Ա/Ձ Արայիկ Աբրահամյան
ՀՀ ֆինանսների նախարարության	Գեղարքունիքի մարզ, գ. Գեղարքունիք
աշխատակազմի գործառնական վարչություն	«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1570058803050200
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 83044915
ՀՀ պաշտպանության նախարարության	
ՆՏԱ գլխավոր վարչության պետ	
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված N 1

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	Չ/մ	Քանակը	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	Ապրանքի մատակարարումը 2020թ. ըստ ամիսների		
						հուլիս	օգոստոս	սեպտեմբեր
1	**Կարտոֆիլ /կարտոֆիլ վաղահաս/, այդ թվում**	**կգ**	**6 186**	**105**	**649 530**	**2 018**	**2 084**	**2 084**
	25149 /Երևան/	կգ	2 754	105	289 170	894	930	930
	14203 /Երևան/		2 208		231 840	720	744	744
	10724 /Երևան/		1 224		128 520	404	410	410
2	**Կարտոֆիլ /կարտոֆիլ վաղահաս/, այդ թվում**	**կգ**	**11 768**	**105**	**1 235 640**	**3 806**	**3 981**	**3 981**
	60913 /Սիսիան/	կգ	10 544	105	1 107 120	3 438	3 553	3 553
	70011 /Աղիտու/		1 224		128 520	368	428	428
3	**Կարտոֆիլ /կարտոֆիլ վաղահաս/, այդ թվում**	**կգ**	**3 978**	**105**	**417 690**	**1 336**	**1 302**	**1 340**
	32236 /Մարտունի/	**կգ**	3 978	105	417 690	1 336	1 302	1 340
	Ընդամենը	2 302 860 (երկու միլիոն երեք հարյուր երկու հազար ութ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ						

Նշում.

Մատակարարը պարտավոր է կարտոֆիլի մատակարարումը զորամասերին իրականացնել համաձայն ՀՀ ՋՈՒ ԹՎ պարենային ծառայության կողմից տրված ապրանքագրերում նշված քանակների և ժամկետների:

Կարտոֆիլի առաքումը զորամասեր իրականացվելու է մատակարարների տրանսպորտային միջոցներով:

Հավելված N 2

Վճարման ժամանակացույց

Հ/հ	Ապրանքի անվանումը	*Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ						
		CPV-ի կոդը	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Կարտոֆիլ /Կարտոֆիլ վաղահաս/	15311100/528	211 890	430 710	649 530	649 530	649 530	649 530
2	Կարտոֆիլ /Կարտոֆիլ վաղահաս/	15311100/529	399 630	817 635	1 235 640	1 235 640	1 235 640	1 235 640
3	Կարտոֆիլ /Կարտոֆիլ վաղահաս/	15311100/533	140 280	276 990	417 690	417 690	417 690	417 690

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է առողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

Ա/Ձ Արայիկ Աբրահամյան

Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ